

## ԱԿՆՑԻՆ

Աստուած ստեղծած է Ակնցին՝ իրար խառնելով ազնուական Հայ մը եւ անտուն Հայ մը:

Միութիւն մըն է ան, որ իր մէջ ունի ազնուական արիւն եւ թափառականութեան ու երգեցողութեան աւիւն:

Այդ միութեան պատուոյ նախագահը եղած է սատանան:

Միութեան աջակողմեան հատուածը բաղկացած է դրական անձերէ, իսկ ձախակողմը նօսր է ու կազմուած է վերացականներէ:

Հակառակ իր մէջ գտնուող անդամներու բազմութեան՝ Ակնցին ընդհանրապէս նիհար մարդ մըն է՝ խոշոր գլուխով: Իր վրայ ամենէն ծանր բանը իր գլուխն է, թէեւ անկէ շատ ավելի ծանր է իր քսակը, որուն ճնշումով միայն Ակնցիին գրպանը... ծակ է:

Ակնցիին ուղեղը ոսկեղէն է. ահա թէ ի՛նչու իր ամբողջ մտածումը ոսկի է:

Իր առաջին փափաքն է ըլլալ Ամիրա կամ անոր նման բան մը: Եթէ չկրցաւ, կ'անցնի երկրորդ փափաքին՝ ըլլալ վաճառական: Եթէ ան ալ չեղաւ, կը գոհանայ մանրավաճառութեամբ: Իսկ եթէ այդ ալ չեղաւ, այս անգամ գրող կ'ըլլայ: Քիչ հեղ կը պատահի, որ գրող չկրնայ ըլլալ: Ըսենք, թէ պատահեցաւ. այն ժամանակ թէ՛ գրող կ'ըլլայ, թէ՛ մանրավաճառ, այսինքն՝ երկուքէն ալ մէյ մէկ քիչ:

Պէտք է խոստովանիլ, որ ընդհանրապէս Ակնցին բանաստեղծ է ու անպատճառ իր *քեւերին* մէջ ունի քաղցրահնչուն քնար մը՝ համակ ոսկի կամ արծաթ:

Ան, իբրեւ ազնուական, կը սերի Անիի Ազատանիէն, Պոլսոյ Ամիրաներէն եւ Փարիսեցի իշխաններէն: Իբրեւ բանաստեղծ՝ կը սերի Գողթան երգիչներէն, հնդերոպական նուագածու ցիկաններէն եւ տրուպատուրներէն: Իսկ իբրեւ գործի մարդ՝ կը սերի... սխալ ըսինք: Բոլոր գործի մարդերը իրմէ կը սերին: Պապերը ժամանակին արքայութիւն ծախելու համար դժուար յաճախորդ կը գտնէին, մինչդէռ Ակնցիները իրենց յաճախորդներուն շատ դիւրութեամբ կը ծախեն դժոխքը: